

ԿԱՐԾԻՔ

Աշուտ Վոլոյյաի Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դ. 10-ական թթ.)» դոկտորական ատենախոսության մասին

Ազգային գրավոր մատենագրության ցանկացած տեսակի կամ սեռի լեզվական քննությունը ունի գիտական հիմնավորում և պատճառաբանվածություն: Դա ոչ միայն գործիք և միջոց է վեր հանելու ազգային-պատմական ու մշակութային զարգացման յուրահատկությունները, այլև ուղղակիորեն նպաստում է գրական գործընթացների զարգացմանը և բուն լեզվական առաջընթացի բովանդակությունն ու տրամաբանությունը հասկանալուն: Գործը առավել արդյունավետ է դառնում, եթե քննության առարկան մեծ ժամանակահատվածի լեզվական-մշակութային զարգացումներն են, քանզի հնարավորություններ են բացվում պարզելու օրինաչափություններ և միտումներ, որոնք բնութագրում են այդ զարգացումները:

Հայ գրավոր մատենագրության մի շարք երեսներ հանգամանորեն քննարկվել են լեզվառական ուսումնասիրություններում: Քննարկման առարկա են դարձել ինչպես առանձին գրողների և հրապարակախոսների երկերի, այնպես էլ որոշակի շրջափուլերի կամ գրական առանձին տեսակների լեզուն:

Գեղարվեստական վավերագրությունների լեզուն այս տեսակետից մնում էր քննարկումների կարու առարկա: Տեքստի այդ տեսակի բազմաշերտ բնույթը, բովանդակային և լեզվառական բազմազանությունը, լեզվի պատմական ընթացքին զուգահեռ զարգացումները ենթադրում են հետաքրքիր միտումների և օրինաչափությունների բացահայտումներ: Այնպես որ միանգամայն հասկանալի է և հիմնավորված թեմայի ընտրությունը:

Աշխատանքում հստակ են սահմանվում նպատակն ու խնդիրները և առաջարկվում ու ներկայացվում են հիմնականում նույնքան հստակ լուծումներ, որոնք ել պայմանավորել են աշխատանքի հիմնական արժանիքները:

1. Աշուտ Գալստյանը քննարկման համար ընտրել է ժամանակազրությամբ և ծավալով հսկայական նյութ՝ արևելահայ գեղարվեստական վավերագրությունը՝ սկսած 19-րդ դարի 50-60-ականներից մինչև մեր օրերը: Առանձին դեպքերում համառոտ ակնարկներով անդրադառնում է նաև նախորդների նմանատիպ հուշագրական գործերին:
2. Հեղինակը սահմանում և ճշգրտում է գեղարվեստական վավերագրության ժանրատեսակները՝ հիշատակարաններ, հուշագրություն, ուղեգրություն, օրագրություն, էսե ևն. հայ մատենագրության մեջ առանձնացնում է դրանց տիպար օրինակները, համառոտ տալիս է դրանցից յուրաքանչյուրի ժանրային քնութագիրը՝ նախապատրաստելով դրանց լեզվաոճական վերլուծությունը:
3. Լեզվական վերլուծությունները ուղեկցվում են ժանրատեսակային և մշակութարանական հետաքրքիր զուգորդումներով, որոնք առավել համոզիչ են դարձնում լեզվական նյութի քննարկումները և արժեքավոր ու արժանահավատ են ցուցանում մատուցվող գիտական գնահատումները:
4. Հաճախ լեզվաոճական և ժանրային զուգահեռներ են անցկացվում և համաժամանակակից և՝ տարաժամանակակից նույնաբնույթ երկերի միջև, որը հնարավորություն է տալիս երևույթի նկարագրությունը դարձնելու համակարգված ու համապատկերային: Սա, ինչ խոսք, ենթադրում է վերլուծվող նյութի լավ իմացություն և ժանրային բազմազան դրսերումների մեջ առաջնային ընդհանրական հատկանիշները առանձնացնելու կարողություններ:
5. Չնայած փաստական նյութի մեծ ընդգրկմանը՝ հեղինակը կարողացել է հիմնականում ճշգրտորեն առանձնացնել գեղարվեստական վավերագրության լեզվի

կառուցվածքային կաղապարների և բարային կազմի ու քերականական կառուցի առավել բնորոշ դրսեորումները: Եվ դա առավելապես է նրան հաջողվել առաջին դեպքում՝ կառուցվածքային կաղապարները քննելիս՝ ոճական կառուցի բաղադրիչներ (պատմողական և գնահատողական խոսքի դրսեորումներ), երկխոսությունը որպես խոսք կառուցվածքային բաղադրիչ ևն: Այս տեսակետից շատ հետաքրքիր են որոշակի լեզվամշակույթ կրող անձին բնութագրող հասկացությունների և հայի տեսակն ու լեզվամտածողությունը բնորոշող հիմնարարների և լեզվական կաղապարների վերլուծությունները, օրինակ՝ կարոտ, մանկություն, հայրենիք, տուն, հող, երգ, հայ, գաղթօջախ, սփյուռք, հուշ, կորսված հայրենիքի զգացողություն ևն: Ժանրի լեզվական յուրահատկությունների ուշագրավ բացահայտումներենպատճառահետևանքային և զգացական լեզվատարրերի համադրական նկարագրությունները՝ պայմանավորված հուշագիր հեղինակների անհատական տիպերով:

Առհասարակ, աշխատանքի հետաքրքիր և կարևոր հատվածները նրանք են, որոնցում հեղինակը փորձում է վեր հանել գեղարվեստական վավերագրության տեքստի բնորոշ հայտանշանների լեզվական արտահայտությունները: Գեղարվեստական վավերագրության ժանրի լեզուն գեղարվեստական լեզվից տարբերվում է իր հաղորդակցային գործառույթով (էջ 56). ատենախոսի այս և նման պնդումները հաստատվում են լեզվի տարբեր մակարդակների մեջ լեզվական այդօրինակ նշանների փնտրությով և նկարագրությամբ: Լեզվական գրեթե բոլոր մակարդակների վերաբերյալ կան ուշագրավ հաստատումներ, որոնք ել հենց ամրապնդում են այս աշխատանքի գրության ու գոյության անպայման իրավունքը: Շարահյուսական իրողությունների վերլուծություններում այդպիսի բնորոշ բաղադրիչներից է, օրինակ, բարդ նախադասության կազմում բաղադրիչ նախադասությունների հնչերանգային տիպերի հաջորդափոխությունների հարցը՝ հարցական/պատմողական/բացականչական/բացականչական, պատմողական/հարցական բաղադրիչ նախադասությունների հաջորդելիություն ևն (338-339):

6. Գրական լեզվի կանոնարկման հարցերն ու ժամանակաշրջանը քննարկելիս մեզանում երբեմն կամ շատ հաճախ մոռացության է տրվում մի շատ կարևոր գործոն կամ արդյունք. գրական լեզվի քաղաքացիությունը պիտի ընկալվի ու ճանաչվի միայն այն դեպքում, եթե նրա գործառական իրավունքները հիմնականում հաստատված են կիրարկության հնարավոր բոլոր ոլորտներում՝ առավել կամ պակաս չափով: Գրական արևելահայերենի նորմավորման շրջանը 20-րդ դարասկիզբն է՝ վերը նշված պայմանականություններով: Աշխատանքիս հեղինակը հատուկ շեշտադրումներ չի անում այս առնչություններում, սակայն հստակորեն զարգացնում է այն զաղափարը, որ գեղարվեստական հուշագրությունների լեզուն նույնպես գործառական այն դաշտն է, որտեղ կամ որի միջոցով է նաև ընթանում գրական արևելահայերենի նորմավորման ուղին՝ ձևավորելով շատ որոշակի մի շրջափուլ գրական հայերենի զարգացման ճանապարհին: Եթե հեղինակը խորացներ իր կատարած շրջանարաժանման լեզվական ու լեզվաբանական հիմքերը նաև քերականության մակարդակում կամ ենթամակարդակներում, ապա շատ ավելի նպատակային կներկայանային նրա իսկ կողմից մեզ մատուցվող այս զաղափարի լեզվական հիմքի նկարագրությունները:

Ունենք մասնակի դիտողություններ.

1. Վերլուծությունների համադրական/զուգադրական եղանակը փոքր-ինչ թուլանում է երրորդ և չորրորդ զլուխներում՝ բառային կազմի շերտերն ու խմբերը և քերականական իրողությունները քննարկելիս. դրանցից մի քանիսի(օրինակ՝ արևմտահայերեն բառեր, հնարառեր, հապավումներ կամ՝ բառային միաձևույթ և բազմաձևույթ կաղապարներ, չթերվող խոսքի մասերի ոճական կիրառություններ ևն) դիտարկումը այդ չափանիշներով և այդ մոտեցմամբ դառնում է ինչ-որ չափով ինքնանպատակ, թուլացնում է նախորդող զուգադրական քննարկումների ուժը:
2. Մասամբ չպատճառաբանված է մնում քննարկվող նյութի ժամանակագրության մեջ երկու շրջափուլերի առանձնացումը՝ առաջին փուլ՝ 19-րդ դարի վաթսունականներից

մինչև 1920 թ., և երկրորդ փուլ՝ 20-ականներից մինչև 21-րդ դարասկիզբ, քանի որ ըստ այդ շրջափուլերի դիտարկվում են միայն բառային կազմի խնդիրները: Շատ ավելի հետաքրիր կլիներ նաև ցույց տալ քերականության, ինչու չե, նաև լեզվի գեղարվեստականացման նկատելի զարգացումները ըստ այս շրջափուլերի:

3. Հեղինակի առանձին ձևակերպումների և պնդումների վերաբերյալ ունենք անհամաձայնություններ: Օրինակ՝ գրական հայերենի մշակման գործում Դորագատին և «այդ պայքարի առաջամարտիկ» (էջ 41) Խ. Աբովյանին թեկուզ հպանցիկ, բայց չափազանց մեծ դեր հատկացնելը: Խ. Աբովյանը ընդամենը գրական աշխարհաբարին մոտ լեզվով գեղարվեստական մեծ արժեք ունեցող գործ ստեղծեց՝ այդպես և այդ չափով նպաստելով արևելահայ աշխարհաբարի առաջընթացին: Հիշենք նաև, որ Աբովյանի գիրքը հրապարակ իջավ 1858-ին, երբ Հյուսիսաֆայլի խմբակը և Լազարյան ճեմարանի տղաները արդեն ահռելի աշխատանք էին կատարել արևելահայ աշխարհաբարի մշակման գործում: Ի դեպ, հատուկ պետք է շեշտել, որ խոսքը, այնուամենայնիվ, վերաբերում է արևելահայ աշխարհաբարին: Նույն շրջանում արևմտահայաշխարհաբարը զգալիորեն ավելի մշակված ու հղկված նկարագիր ուներ, և այդ գործում բոլորովին այլ են դերակատարները:

Անհամաձայնություն ունենք ատենախոսի այն համաձայնության հետ, որով պաշտպանվում է շրջանառված տեսակետը, թե երկճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը ավարտվում է 1920-ին, որին հաջորդում է Ժամանակակից հայերենի ենթաշրջանը, և դա այն դեպքում, երբ Ժամանակակից հայերեն ասելով՝ հասկացվել է և այսօր էլ հասկացվում է բացառապես գրական արևելահայերենը:

Կարծում ենք՝ առանձին դեպքերում պատճառաբանված չեն լեզվական նյութի բաշխումը և նկարագրությունը ըստ լեզվի մակարդակների: Օրինակ՝ ատենախոսության «Բնութագրական բառաշերտեր» խորագրի տակ վերլուծվում ու ներկայացվում են ոչ միայն բառային, այլև զուտ քերականական իրողությունները գրաբարյան կամ գրաբարատիպ հոգնակիի և հոլովական ձևեր՝ երեխայք, ծերունիք,

տղայք, եկեղեցվո, զՃաշը, զնոսա, սորա, դորա ևն (Էջ 145-146): Կամ՝ «Զուտ արևմտահայերեն բառեր» վերնագրով մատուցվում է Ժխտական դերանուն + Ժխտական բայաձև կառուցքը (Ոչ ոք գիտեր, որ հայ եմ 167), կամ նույն վերնագրի տակ քննարկվում են արևմտահայերեն բառաձևեր՝ կիներ, հայու, ծովու, միսեր, քիթեր, ինձմեն (Էջ 165-168) ևն:

4. Այսպիսի աշխատանքները գնահատելիս ես սովորաբար խուսափում եմ խոսելուց վերնագրերի ձևակերպումների, զիտական ապարատի պատշաճ ներկայացման և նման բաների մասին: Բայց աշխատանքի այդ կողմը մեծապես կշահեր, եթե ընդամենը մի քիչ ավելի ուշադիր լինեինք այլ աշխատանքների նկատմամբ: Օրինակ՝ անհասկանալի է, ինչու են վերնագրերում կրկնվում նույն կամ նույնական արտահայտությունները և ձևակերպումները՝ Գլուխ 4-րդի բոլոր 11 բաժինների վերնագրերում տարբեր խոսքի մասերի վերաբերյալ կրկնվում է «կիրառության առանձնահատկությունները» արտահայտությունը, մինչդեռ կարելի էր պարզապես թվարկել խոսքի մասերը: Կամ՝ Գլուխ 5-րդի բոլոր բաժինների վերնագրերում կարդում ենք՝ «Համեմատությունը պատկերավորման միջոց», «Մակդիրը պատկերավորման միջոց», կամ՝ «Կրկնությունը արտահայտչական միջոց», «Աստիճանավորումը արտահայտչական միջոց», «Բառախաղը արտահայտչական միջոց» ևն: Մինչդեռ ենթագլուխների վերնագրերում («Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվի պատկերավորման միջոցները», «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվի արտահայտչական միջոցները») արդեն ամեն ինչ ասկած է, և այստեղ կարելի էր բավարարվել՝ պատկերավորման ու արտահայտչական միջոցի տեսակը պարզապես նշելով:

Կամ՝ լեզվական-արտահայտչական առանձին իրողությունների վերաբերյալ (պատմողական նախադասություն, համառոտ և ընդարձակ նախադասություններ (338, 340), մակդիր, համեմատություն, շրջասություն) արդյո՞ք հարկը կարդասագրքային/տեսական բացատրություններ տալու(օրինակ՝ «Մակդիրը լեզվի

պատկերավորման միջոցներից ե» (356): Կամ՝ արդյո՞ք հարկը կամ պետքը կար հետևյալշատ սովորական հաստատումները կատարելու «Երկկազմ նախադասություններով կարող են արտահայտվել նաև տարբեր դատողություններ» (341), «....քնազրերում որոշիչն ունի թէ՝ սովորական, թէ՝ շրջուն շարադասություն» (344), «....քնազրերում որոշիչ կարող են դառնալ նաև գոյականը, թվականը, դերանունը» (344), «Առաջ կապը կարող է արտահայտել նաև տարածական հարաբերություն» (327), «Ո հոդը կարող է արտահայտել նաև ցուցականության իմաստ» (296) ևն:

5. Հուշազրությունը գայթակղության մղող քնազավառ է: Եվ այդ գայթակղությունը հատկություն ունի շեղելու ճշմարիտ ուղուց նաև մեզ՝ ուսումնասիրողներիս: Լեզվառձական քննությունը աշխատանքիս հեղինակի առաջադիր խնդիրն է: Բայց ահա երբեմն հետազոտողը տարվում է տեքստի գրականագիտական կամ բովանդակային դիտարկումներով (օր.՝ Խ. Աբովյանի Ճամփորդական նոթերը՝ Անիի և Սուրբ Էջմիածնի նկարազրություններով, էջ 8, Ս. Թաղիայյանի «Ճանապարհորդություն... ի Հայս», էջ 46, այդպիսի բնույթ ունի «Նկարազրական խոսքի ոճական դրսնորումները» ենթաքաժինը, էջ 99-104, Ս. Կապուտիկյանի «Գույներ իրանահայ աշխարհից» ուղեգրության բանահյուսական նյութի նկարազրությունը, էջ 407-408), իսկ երբեմն էլ շարադրանքը ծանրաբեռնվում է ծավալուն հղումներով ու վկայություններով (հուշազիր հեղինակների անունների կես էջից ավելի թվարկումը՝ էջ 14-15, կես էջի, նույնիսկ մեկ էջի հասնող մեջբերումներ՝ էջեր՝ 87, 144, 148-149, 160-161, 183-184, 193, 227): Երևի պետք էր առավել ջանք գործադրվեր այդ գաթակղություններից հրաժարվելու համար:

Այսպիսով, արված դիտարկումները քնավ չեն խոչընդոտում կատարված աշխատանքը համարելու միանգամայն հաջողված: Ունենք բարեկիրք շարադրանք, մշակված լեզու՝ զերծ վրիպակներից ու բացթողումներից:

Աշոտ Գալստյանը իրականացրել է բանասիրական, քննական մեծ ծավալի աշխատանք, որը հաստատապես հիմք է տալիս նրա հեղինակին՝ ամենայն իրավունքով հայցելու բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Աստենախոսության բովանդակությունը և սեղմազրում ներկայացված դրույթները համապատասխանում են միմյանց: Տպազրված մենազրություններն ու հոդվածներն ամբողջովին արտացոլում են ատենախոսության գլուխների հիմնական բովանդակությունը:

Աշոտ Վոլոռյայի Գալստյանի՝ «Արևելահայ գեղարվեստական վավերազրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դ. 10-ական թթ.)» թեմայով դոկտորական ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանում են «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» դոկտորական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին, ուստի միջնորդում եմ ԲՈԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհրդին՝ Աշոտ Գալստյանին շնորհելու ժ. 02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Եվ վերջում ուզում եմ մի շատ կարևոր հավելում անել:

Գիտական աստիճաններ շնորհելիս կամ ատենախոսությունը շնորհումի երաշխավորելիս հաճախ կամ գրեթե միշտ երկրորդական կամ անտեսված փաստ ու հանգամանք են դառնում ատենախոսի մարդկային անհատական որակները: Մինչդեռ գիտական ու անգիտական բոլոր որակներից դուրս և առանձին այս գործոնը պետք է դիտարկվի: Մենք այսօր այս օրին ենք հասել դաստիարակության պակասից, մարդկային սովորական արժեքները անտեսելու, իսկ հետո նաև անհոգեղարձ կորցնելու պատճառով: Ատենախոսության հեղինակը ունի մարդկային բարձր որակներ՝ զուսպ, համեստ, աշխատանքի ու աշխատող մարդու հարգն ու պատիվը խորապես գիտակցող, գործընկերային հարաբերություններում շիտակ, անշար ու

անխառն: Սա մեկ անգամ ևսգալիս է հաստատելու իմ վստահ համոզումը, որ
այդպիսի գիտնականն ու մտավորականը արժանի է իր ուրույն տեղը ունենալու հայ
բանասիրության դոկտորների փաղանգում:

Բանասիրական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր

Տ. Արք

Յու. Ավետիսյան

14.06.2021 թ.

Հ. Ա. Ավետիսյան պարագայությունը ներշնչ հանցած է
ԵՊՀ գիտական գործության համար Հ. Ա. Ավետիսյան

